


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան

2012թ. հուլիսին


/վերլուծություն/

2012թ. հուլիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14048 գործարքներ, որոնց քանակը 2012թ. հունիսի համեմատ նվազել է 0.9%-ով, իսկ 2011թ. հուլիսի համեմատ աճել՝ 0.6%-ով:

2012թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3968 օտարման գործարքների 76.2%-ը կազմել են առուվաճառքները, 23.3%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.3%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2012թ. հուլիսին, 2012թ. հունիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 6.0%-ով, իսկ 2011թ. հուլիսի համեմատ՝ 3.6%-ով:

2012թ. հուլիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 57.9%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. հուլիսին, 2012թ. հունիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.4%-ով, իսկ 2011թ. հուլիսի համեմատ նվազել՝ 5.4%-ով:

2012թ. հուլիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հուլիս 2011թ.	հուլիս 2012թ.	հունիս 2012թ.
Կենտրոն	440200	415050	414000
Արաբկիր	344600	342800	342050
Քանաքեռ-Զեյթուն	262500	270100	269150
Նոր-Նորք	226300	232050	230250
Ավան	240400	243000	241000
Էրեբունի	240000	238300	238100
Շենգավիթ	223800	238500	237700
Դավթաշեն	260400	263100	262000
Աջափնյակ	224800	229800	229100
Մալաթիա-Սեբաստիա	225700	228400	227500
Նուբարաշեն	146400	140200	140200
Միջինը Երևանում	257700	258400	257400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. հուլիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. հունիսի համեմատ, աճել են 0.4%-ով:

2012թ. հուլիսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 365 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. հունիսի համեմատ աճել է 15.9%-ով, իսկ 2011թ. հուլիսի համեմատ՝ 18.1%-ով:

2012թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հուլիս 2011թ.	հուլիս 2012թ.	հունիս 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	128300	112000	112000
	Ապարան	52400	49100	49100
	Թալին	61200	61100	61100
Արարատ	Արտաշատ	100400	92500	92500
	Մասիս	114900	109100	108000
	Վեդի	95300	97050	96200
	Արարատ	80200	74100	73300
Արմավիր	Վաղարշապատ	141600	153200	153200
	Արմավիր	118500	118000	118000

	Մեծամոր	82300	86200	86200
Գեղարքունիք	Սևան	89700	99000	99000
	Գավառ	53100	53600	52800
	Մարտունի	90400	105200	104000
	Վարդենիս	37200	36150	35100
	Ճամբարակ	23600	22000	21100
	Վանաձոր	91300	87000	87000
Լոռի	Ստեփանավան	70200	73900	73500
	Սպիտակ	90300	99800	99800
	Ալավերդի	34600	51600	51600
	Տաշիր	44600	42850	42000
	Թումանյան	12700	11000	11000
	Շամլուղ	8600	8000	8000
	Ախթալա	20100	19500	19500
	Աբովյան	140100	153000	153000
Կոտայք	Նոր Հաճն	120200	128200	128200
	Բյուրեղավան	106200	107100	107100
	Եղվարդ	106300	108500	108500
	Հրազդան	61100	60000	60000
	Ծաղկաձոր	188100	292500	292500
	Չարենցավան	74100	84000	84000
	Գյումրի	106400	108900	108900
Շիրակ	Արթիկ	66000	64300	64200
	Մարալիկ	34800	36400	35600
	Գորիս	122300	115000	115000
Սյունիք	Կապան	101300	90100	90100
	Սիսիան	92200	81400	81400
	Մեղրի	71100	68000	67050
	Ագարակ	40500	42400	42000
	Քաջարան	69800	94100	94100
	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայք	83400	85500	84800
Վայոց ձոր	Եղեգնաձոր	112300	117500	116800
	Ջերմուկ	120900	102600	101400
	Դիլիջան	108300	104000	104000
Տավուշ	Իջևան	125300	114000	113000
	Բերդ	50300	51200	50100
	Նոյեմբերյան	41100	41500	41500
	Այրում	29300	24500	24500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. հունիսի համեմատ, աճել են 0.4%-ով:

2012թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 375 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 125, մարզերում միասին վերցրած՝ 250: 2012թ. հուլիսին, 2012թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.8%-ով, ընդ որում Երևանում՝ մնացել է անփոփոխ, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 12.6%-ով: 2011թ. հուլիսի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.1%-ով, ընդ որում Երևանում՝ 33.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 9.7%-ով:

2012թ. հուլիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հուլիս 2011թ.	հուլիս 2012թ.	հունիս 2012թ.
Կենտրոն	459200	463800	462400
Արաբկիր	374100	369600	368550
Քանաքեռ Զեյթուն	272100	280500	279800
Նորք Մարաշ	283200	307100	306800
Ավան	243700	260400	259100
Էրեբունի	245600	228800	228100
Շենգավիթ	235500	245100	244800
Դավթաշեն	274800	263800	263750
Աջափնյակ	236900	239600	238150
Մալաթիա Սեբաստիա	233900	228000	227150
Նուբարաշեն	150100	144500	144500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	273600	275600	274800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. հուլիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. հունիսի համեմատ աճել են են 0.3%:

2012թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առավաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հուլիս 2011թ.	հուլիս 2012թ.	հունիս 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	132300	133100	133000
	Ապարան	53900	53050	53000
	Թալին	62400	68650	68650
Արարատ	Արտաշատ	107100	98250	98200
	Մասիս	118600	111500	111000
	Վեդի	98000	100200	100200
Արարատ	Արարատ	83000	87250	87200
	Վաղարշապատ	160400	152000	151300
Արմավիր	Արմավիր	121500	104000	104000
	Սևան	93500	94100	93050
Գեղարքունիք	Գավառ	54500	52100	52000
	Մարտունի	91400	93000	92100
	Վարդենիս	40500	34000	34000
	Ճամբարակ	26500	25900	25900
	Վանաձոր	99200	98000	97200
Լոռի	Ստեփանավան	72700	87550	87500
	Սպիտակ	97300	113250	113250
	Ալավերդի	35300	46600	46600
	Տաշիր	48100	50200	50100
	Թումանյան	13200	12000	12000
	Շամլուղ	10000	13200	13200
	Ախթալա	21200	29400	29400

Կոտայք	Աբովյան	147700	153500	153500
	Նոր Հաճն	127800	129800	129700
	Բյուրեղավան	108000	119900	119900
	Եղվարդ	112000	115350	115250
	Հրազդան	64600	79000	78800
	Ծաղկաձոր	309600	305000	305000
	Չարենցավան	76000	82200	82000
Շիրակ	Գյումրի	117300	117200	117000
	Արթիկ	68000	61000	61000
	Մարալիկ	37200	49000	48000
Սյունիք	Գորիս	131000	126900	126900
	Կապան	103300	98200	98200
	Սիսիան	94400	89600	89600
	Մեղրի	72100	76200	75300
	Ագարակ	42100	46000	45900
	Դաստակերտ	10500	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	85100	83500	82800
	Եղեգնաձոր	120400	112000	111800
	Ջերմուկ	124200	121800	121500
Տավուշ	Դիլիջան	110800	107000	106400
	Իջևան	134500	121000	120000
	Բերդ	52600	57700	57700
	Նոյեմբերյան	43600	46050	46000
	Այրում	30100	34200	34200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. հունիսի համեմատ, աճել են 0.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. հուլիսին հանրապետությունում օտարվել են 1343 միավոր /538.29 հա/ հողեր, որից Երևանում՝ 122 միավոր /42.68 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 721 միավոր /426.10 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /1.33 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 387 միավոր /32.32 հա/, որից Երևանում՝ 59 միավոր /3.37 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 193 միավոր /44.25 հա/, որից Երևանում՝ 51 միավոր /37.90 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 13 միավոր /9.91 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.08 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 13 միավոր /0.78 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 15 միավոր /1.63 հա/ ընդհանուր մակերեսով:

2012թ. հուլիսին հանրապետությունում օտարված հողերից 1169 միավորի /446.06 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 99 միավոր /41.47 հա/, նվիրատվության գործարքներ՝ 169 միավորի /91.61 հա/, որից Երևանում՝ 23 միավոր /1.21 հա/ և փոխանակության գործարքներ՝ 5 միավորի /0.62 հա/:

Հանրապետությունում 2012թ. հուլիսին, 2011թ. հուլիսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.8%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 21.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ է 3.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի

նկատմամբ մ : Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Գեղարքունիքի մարզում՝ 100.33 հա, որից 97.49 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 22.3%-ը կամ 261 գործարքներ /53.84 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 28 միավոր /4.10 հա/, իսկ 77.0%-ը կամ 900 միավորը /391.48 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 68 միավոր /36.66 հա/: 2012թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 8 գործարք /0.74 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. հուլիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակակա և կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակակա և կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	8	0.48	20	3.62	7	0.58	2	0.08	39	2.38	20	33.63
Արագածոտն	11	9.00	0	0.00	0	0.00	7	1.85	27	17.84	0	0.00	27	2.54	1	0.06
Արարատ	20	15.61	1	0.17	2	0.16	4	0.13	66	61.07	1	2.00	40	3.46	2	0.14
Արմավիր	5	1.53	1	0.01	1	0.08	8	0.16	47	36.68	1	2.31	46	5.73	3	0.06
Գեղարքունիք	2	0.60	0	0.00	8	1.26	4	0.31	279	96.89	0	0.00	5	0.47	1	0.10
Լոռի	2	0.13	1	0.27	0	0.00	7	0.21	7	4.74	0	0.00	10	0.77	3	0.05
Կոտայք	8	5.68	3	0.79	31	1.39	40	0.48	88	69.49	1	0.20	75	6.12	18	0.92
Շիրակ	0	0.00	0	0.00	3	0.02	4	0.08	23	22.51	0	0.00	5	0.55	4	0.15
Սյունիք	1	1.50	1	4.04	1	0.16	9	0.48	10	7.98	0	0.00	2	0.34	1	0.10
Վայոց Ձոր	1	0.07	0	0.00	6	0.34	6	0.08	11	3.39	0	0.00	6	0.33	3	0.01
Տավուշ	3	0.61	1	0.04	5	0.26	2	0.01	9	7.37	0	0.00	5	0.27	2	0.02
Ընդամենը	53	34.73	8	5.32	65	4.15	111	7.41	574	328.54	5	4.59	260	22.96	58	35.24

Ստորև ներկայացվում է 2012թ. հուլիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյուն ար օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	11	1.07	0	0.00	1	0.05	10	1.02	17	3.03	0	0.00	0	0.00	7	0.43	10	2.60
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	18	10.85	11	9.00	0	0.00	0	0.00	7	1.85
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	24	15.49	17	15.03	1	0.17	2	0.16	4	0.13
Արմավիր	5	0.05	0	0.00	0	0.00	5	0.05	10	1.73	5	1.53	1	0.01	1	0.08	3	0.11
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	2.17	2	0.60	0	0.00	8	1.26	4	0.31
Լոռի	7	0.47	1	0.27	0	0.00	6	0.20	3	0.14	2	0.13	0	0.00	0	0.00	1	0.01
Կոտայք	4	0.16	0	0.00	2	0.13	2	0.03	78	8.17	8	5.68	3	0.79	29	1.26	38	0.44
Շիրակ	2	0.023	0	0.00	1	0.003	1	0.02	5	0.07	0	0.00	0	0.00	2	0.01	3	0.06
Սյունիք	5	4.52	1	4.04	1	0.16	3	0.32	6	0.15	0	0.00	0	0.00	0	0.00	6	0.15
Վայոց Ձոր	3	0.01	0	0.00	0	0.00	3	0.01	9	0.41	0	0.00	0	0.00	6	0.34	3	0.07
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	11	0.92	3	0.61	1	0.04	5	0.26	2	0.01
Ընդամենը	37	6.30	2	4.31	5	0.34	30	1.65	195	43.13	48	32.58	6	1.01	60	3.80	81	5.74

2012թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 5 գործարք /2.15 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. հուլիսին, 2011թ. հուլիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 13.9%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 5.7 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 20.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 2.1%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 29.4%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 26.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. հուլիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	11	9.00	74.3	932.4	463.8	15	6.02	365.0	12000.0	3825.5
Ապարան						2	0.90	86.5	2727.3	700.0
Թալին						5	2.72	93.6	5494.5	614.3
Ծաղկահովիտ						4	8.13	79.5	1000.0	242.3
Արարատի մարզ										
Արտաշատ	3	0.10	4272.5	4272.7	4272.6	32	13.58	335.1	10833.3	2790.4
Մասիս	11	13.43	82.8	260.2	148.5	24	42.06	200.0	11904.8	3042.2
Վեդի	3	1.50	292.0	1044.8	654.8	9	5.24	207.0	10795.1	1865.8
Արմավիրի մարզ										
Արմավիր						26	19.10	294.3	9090.0	1565.0

Բաղրամյան						3	6.04	90.6	2561.1	740.0
Վաղարշապատ	5	1.53	39.6	234.4	129.1	18	11.54	444.4	11764.7	2645.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						272	90.93	199.8	1875.0	400.0
Ճամբարակ						4	2.85	60.5	953.3	335.0
Մարտունի								51.1	2850.0	728.5
Սևան	2	0.60	1221.0	1221.0	1221.0			52.2	2134.8	315.3
Վարդենիս						3	3.10	41.2	2575.1	385.3
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.08	187.0	187.0	187.0	4	2.93	170.4	6424.2	660.0
Գուգարք	1	0.05	506.0	506.0	506.0	2	0.40	234.6	6065.9	751.3
Սպիտակ								250.0	5555.5	728.1
Ստեփանավան						1	1.41	90.6	1686.6	300.0
Տաշիր								45.3	1384.4	143.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	2.02	119.8	119.8	119.8	27	17.55	279.3	11942.7	4681.0
Եղվարդ	7	3.66	200.0	1595.0	769.4	39	39.68	174.4	11971.8	2733.2
Հրազդան						21	11.26	130.5	10256.4	1865.7
Շիրակի մարզ										
Ախուրյան						7	7.86	252.0	1693.1	590.0
Ամասիա						1	4.53	40.9	261.0	128.5
Անի								110.6	546.9	370.0
Աշոցք						4	3.01	58.5	215.8	123.0
Արթիկ						6	2.74	79.4	1428.6	383.5
Սյունիքի մարզ										
Գորիս								92.6	1023.2	695.2
Կապան						3	1.34	120.0	841.6	347.3
Մեղրի						1	0.11	193.0	3000.0	725.5
Սիսիան						6	6.53	46.3	1977.4	507.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	0.38	125.0	10000.0	1870.0
Վայք						8	3.01	58.8	1430.7	610.0
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.03	500.0	500.0	500.0	4	0.57	213.3	3783.8	675.3
Իջևան	2	0.58	279.5	350.5	315.0	1	4.00	267.5	9454.5	1235.5
Նոյեմբերյան						4	2.80	46.7	7368.4	848.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. հուլիսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						22	18312.0	130.7	22200.0	2571.8
Ապարան						3	2300.0	124.1	609.6	375.0
Թային						1	1770.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						1	2970.0	60.0	214.3	87.0

Արարատի մարզ										
Արտաշատ	1	1094.0	146.3	146.3	146.3	12	12420.0	173.9	7140.3	892.7
Մասիս	1	500.0	1262.0	1262.0	1262.0	21	14914.3	187.5	25000.0	1205.7
Վեդի						7	7280.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	842.0	356.3	356.3	356.3	18	24241.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						1	1300.0	100.0	833.3	236.0
Վաղարշապատ						27	31740.0	197.4	26528.4	1526.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	2420.0	114.1	114.1	114.1			186.6	1084.3	661.5
Ճամբարակ						1	342.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	6	7200.0	219.8	219.8	219.8	3	3581.0	119.3	5000.0	278.7
Սևան								240.0	3110.4	305.1
Վարդենիս	1	2961.0	67.5	67.5	67.5	1	800.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի								114.3	1388.9	216.0
Գուգարք						9	6728.0	77.9	14083.3	1093.2
Սպիտակ								104.9	1348.3	204.4
Ստեփանավան								88.2	1666.7	175.5
Տաշիր						1	1000.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	25	9297.4	1543.5	5201.2	3539.6	40	30639.4	264.5	35353.5	1960.4
Եղվարդ	4	3336.0	445.5	2737.0	1300.0	29	26225.0	173.6	27000.0	2850.0
Հրազդան						6	4362.0	117.7	34848.5	1320.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	100.0	4400.0	4400.0	4400.0	2	1990.0	113.6	18750.0	331.4
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի								67.9	180.6	160.0
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ	1	28.0	3267.9	3267.9	3267.9	3	3533.6	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	600.0	112.2	1700.0	367.6
Կապան								67.9	2638.9	300.0
Մեղրի						1	2820.0	68.5	632.9	192.3
Սիսիան								123.5	875.0	197.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	400.1	754.8	754.8	754.8	6	3330.9	96.7	7659.6	500.0
Վայք	5	2988.7	858.0	872.0	864.6			120.7	1448.3	200.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	111.0
Իջևան	4	2542.0	3000.0	3000.0	3000.0	5	2710.7	74.1	14423.1	514.2
Նոյեմբերյան	1	29.3	1650.2	1650.2	1650.2			125.0	1948.1	221.0

2012թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 687 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 68.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2012թ. հուլիսին, 2012թ. հունիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 12.4%-ով, իսկ 2011թ. հուլիսի համեմատ՝ 6.2%-ով:

2012թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 46 բնակարանների, 61 անհատական բնակելի տների, 296 հասարակական, 72 արտադրական նշանակության օբյեկտների, 192 միավոր /952.34 հա/ հողերի, 4 այգետնակի և 16 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. հուլիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 8 վարձակալության գործարքների /այդ թվում 2 միավոր՝ 0.003 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը քանակը 2012թ. հունիսի

համեմատ նվազել է 27.3%-ով, իսկ 2011թ. հուլիսի համեմատ՝ մնացել է անփոփոխ: 2012թ. հուլիսին հանրապետությունում վարձակալված 952.34 հա հողերից 0.37 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 951.98 հա հողերից 65.34 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.47 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել

մարզում՝ 712.70 հա, որից 711.23 հա գյուղատնտեսական նշանակության: 2012թ. հուլիսին հանրապետության մարզերում վարձակալվել են 880.91 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2057 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.6%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. հունիսի համեմատ, աճել է 1.5%-ով, իսկ 2011թ. հուլիսի համեմատ նվազել՝ 0.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /53.4%/, առանձնատների /22.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.0%/ և հողերի /7.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1155 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. հունիսի համեմատ, աճել է 4.0%-ով, իսկ 2011թ. հուլիսի համեմատ՝ 16.2%-ով:

2012թ. հուլիսին հանրապետությունում գրավադրվել են 350.60 հա հողեր, որից 24.58 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 88.9%-ը կամ 331.60 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.20 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 205.18 հա, որից 204.69 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. հուլիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 171 գործարքներ, որից 99-ը՝ Երևանում: 2012թ. հունիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 23.9%-ով, ընդ որում Երևանում՝ 23.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 24.1%-ով: 2011թ. հուլիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 9.0%-ով, ընդ որում Երևանում՝ 31.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 67.4%-ով:

2012թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1784 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2012թ. հունիսի համեմատ նվազել է 7.3%-ով, իսկ 2011թ. հուլիսի համեմատ՝ 17.9%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /28.3%/:

«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե